

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ԵՊՀ-ի Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2024 թվականի  
հունվարի 24-ին կայացած Գիտական Խորհրդի N 7 նիստի

Նախագահ – Ս.Ս.Քելյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 32 անդամներից 28-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Ս.Ս.Քելյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և  
քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. 2023/2024 ուստարվա 1-ին կիսամյակի քննությունների կազմակերպման ընթացքը ֆակուլտետում  
/զեկ. գրասենյակի ղեկավար-ղեկանի տեղակալ Գ.Փ.Ալեքսանյան/
2. 2023/2024 ուստարվա 1-ին կիսամյակի դասախոսների անհատական բեռնվածությունների  
կատարման ընթացքը ֆակուլտետում /զեկ. ամբիոնի վարիչներ/
3. Պրոֆեսորադասախոսական կազմի օգնական ներգրավելու հարցի քննարկում  
/զեկ. ամբիոնի վարիչներ/
4. «Ֆիզիկական աշխարհագրություն և ջրաօդերևութաբանություն» ամբիոնի վարիչի հաշվետվությունը  
ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ  
/զեկ. ամբ.վարիչ Ա.Թ.Գրիգորյան/
5. Ընթացիկ հարցեր

Օրակարգը հաստատելուց հետո, ղեկան Ս.Ս.Քելյանը ողջունեց գիտխորհրդի անդամներին  
և մաղթեց տոկունություն՝ ֆակուլտետի զարգացմանն ուղղված հարցերի լուծման համար:

1. **ԼՍԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-  
ղեկանի տեղակալ Գ.Փ.Ալեքսանյանի հաորդումը ֆակուլտետում 2023/2024  
ուստարվա 1-ին կիսամյակի քննությունների կազմակերպման և ընթացքի  
վերաբերյալ: Գոռ Ալեքսանյանը նշեց քննաշրջանի անխնդիր ընթացքի մասին,

ինչպես նաև մանրամասն ներկայացրեց քննաշրջանի, լուծարքային շրջանների ժամանակացույցը: Հաղորդման ընթացքում Գ.Ալեքսանյանը կոչ արեց ամբիոնի վարիչներին հետևողական լինել ամբիոնի դասախոսների կողմից կիսամյակի սկզբին դասընթացների բաղադրիչների ընտրության և հաստատման գործընթացին:

**ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՑԱՆ.** Դեկան Ս.Ս.Քելյանը խոսեց registrar համակարգի, վերջինիս լրացման մեխանիզմների և ժամանակացույցի վերաբերյալ: Ս.Քելյանը հրավիրեց խորհրդի անդամների ուշադրությունը նշված համակարգ գնահատականների անսխալ մուտքագրման գործընթացին՝ հետագա խնդիրներից գերծ մնալու նպատակով:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն:

**2. ԼՄԵՑԻՆ.** Ջրաօդերևութաբանության և ֆիզիկական աշխարհագրության ամբիոնի վարիչ **դոց.Ա.Թ.Գրիգորյանի**, Սերվիսի ամբիոնի վարիչ **դոց.Ս.Ռ.Սուվարյանի**, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչ **դոց.Ա.Ս.Փիլոյանի**, Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ **դոց.Վ.Վ.Գրիգորյանի**, Երկրաֆիզիկայի, ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ **դոց.Մ.Ս.Մկրտչյանի**, Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Վ.Մ.Մանուկյանի** հաղորդումը **2023/2024 ուստարվա 1-ին կիսամյակի դասախոսների անհատական բեռնվածությունների կատարման** վերաբերյալ: Մասնավորապես նշվեցին նախապես հաստատված ծանրաբեռնվածություններում կատարված փոփոխությունները, որոնք առաջացել էին ամբիոնի դոցենտների այլ պաշտոնի անցնելու հետ պայմանավորված: **Դոց.Ս.Ռ.Սուվարյանը** խոսեց մասնագիտությունները մրցակից դարձնելու և որակի բարձրացման վերաբերյալ, ինչպես նաև նշեց, որ ընթացիկ տարվա երկրորդ կիսամյակում ակնկալում են որակական արդյունավետություն՝ որպես նախապես ձեռնարկված քայլերի արդյունք: Մագիստրատուրայում ուսանողների հաճախումների բարձրացման և բեռնվածության լավագույնս կատարման նպատակով, նախատեսվում է դասերը երեկոյան հերթ (18<sup>00</sup>-ից) կազմակերպելու փորձի ներդրում: **Ա.Ս.Փիլոյանը** նշեց, որ ամբիոնի դասախոսների գործուղումների արդյունքում արձանագրվել են

դասաժամերի բացթողումներ, որոնք լրացվել են ըստ ներկայացված ժամանակացույցի: Արտակ Փիլոյանը խոսեց նաև քննությունների անցկացման և գնահատման գործընթացի, մասնավորապես՝ խստության բարձրացման մասին: Դիտարկվեցին նաև դասամատյանների լրացման հետ կապված խնդիրներն ու թերլրացումները, որոնք հետագայում շտկվել են: Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Վ.Ս.Մանուկյանը** ներկայացրեց ամբիոնի դասախոսների բեռնվածությունները և կատարված փոփոխությունները՝ կապված ամբիոնի վարիչի փոփոխման հետ:

**ՀԱՐՅԵՐ ՏՎԵՅԻՆ.** Պրոֆ.Ս.Հ.Հայրոյանը փորձեց ճշտել թե ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել ուսանողների բացակայությունները նվազեցնելու նպատակով:

**ԱՌԱՋԱՐԿԵՅԻՆ.** Դոց. Վ.Ս.Մանուկյանը, Ա.Ս.Փիլոյանը առաջարկեցին կիսամյակի ընթացքում հետևողական լինել դասամատյանների լրացմանը, ինչպես նաև խստություն ցուցաբերել բացակայող ուսանողների նկատմամբ՝ գրավոր նկատողությունների և համալսարանից հեռացման զգուշացումների միջոցով:

**ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՑԱՆ.** *դեկան Ս.Ս.Քելյանը* խոսեց բարձր կարգի մասնագետներ պատրաստելու հարցում ամբիոնների պատասխանատվության և որակի բարձրացման ռազմավարության մասին: Ելույթի ընթացքում կարևորվեց ամբիոնի վարիչների նշանակությունը որակյալ մասնագետների ընդգրկման և ներգրավման հարցում: Ս.Ս.Քելյանը հրավիրեց խորհրդի ուշադրությունը դասամատյանների լրացման ընթացքին, ինչը պետք է իրականացվի բացառապես դասընթացը վարող դասախոսի կողմից և չթողնել կուրսի ավագի կամայականությանը:

**ՈՐՈՇԵՅԻՆ.** Ընդունել ի գիտություն:

**3.1 ԼՍԵՅԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Ս.Փիլոյանի** հաղորդումը պրոֆեսորին օժանդակելու կամ առանձին դասընթացները վարելու շրջանակներում ուսումնական պրոցեսում

կազմակերպչական, տեխնիկական հարցերը կազմակերպելու նպատակով պրոֆեսորի օգնական ներգրավելու հարցի վերաբերյալ:

Ա.Ս.Փիլոյանը ներկայացրեց ամբիոնի երաշխավորությունը ստացած Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող *Հովհաննես Արծրունի Հովհաննիսյանի* թեկնածությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի երաշխավորությունը՝ հաստատել *Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Հովհաննես Արծրունի Հովհաննիսյանի* թեկնածությունը որպես *պրոֆեսոր Վ.Ռ.Բոյնագրյանի* օգնական:

**3.2 ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի *Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Ս.Փիլոյանի* հաղորդումը պրոֆեսորին օժանդակելու կամ առանձին դասընթացները վարելու շրջանակներում ուսումնական պրոցեսում կազմակերպչական, տեխնիկական հարցերը կազմակերպելու նպատակով պրոֆեսորի օգնական ներգրավելու հարցի վերաբերյալ:

Ա.Ս.Փիլոյանը ներկայացրեց ամբիոնի երաշխավորությունը ստացած Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հայցորդ *Լենա Յուրիկի Մարայանի* թեկնածությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի երաշխավորությունը՝ հաստատել *Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հայցորդ Լենա Յուրիկի Մարայանի* թեկնածությունը, որպես *պրոֆեսոր Պ.Ս.Էֆենդյանի* օգնական:

**3.3 ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի *Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Ս.Փիլոյանի* հաղորդումը պրոֆեսորին օժանդակելու կամ առանձին դասընթացները վարելու շրջանակներում ուսումնական պրոցեսում

կազմակերպչական, տեխնիկական հարցերը կազմակերպելու նպատակով պրոֆեսորի օգնական ներգրավելու հարցի վերաբերյալ:

Ա.Ս.Փիլոյանը ներկայացրեց ամբիոնի երաշխավորությունը ստացած Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հայցորդ **Մարիամ Հակոբի Փենինյանի** թեկնածությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի երաշխավորությունը՝ հաստատել **Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հայցորդ Մարիամ Հակոբի Փենինյանի** թեկնածությունը, որպես **պրոֆեսոր Վ.Պ.Վարդանյանի** օգնական:

**3.4 ԼՍԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Սերվիսի ամբիոնի վարիչ Ս.Ռ.Սուվարյանի հաղորդումը** պրոֆեսորին օժանդակելու կամ առանձին դասընթացները վարելու շրջանակներում ուսումնական պրոցեսում կազմակերպչական, տեխնիկական հարցերը կազմակերպելու նպատակով պրոֆեսորի օգնական ներգրավելու հարցի վերաբերյալ: Ս.Ռ.Սուվարյանը ներկայացրեց ամբիոնի երաշխավորությունը ստացած Սերվիսի ամբիոնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող **Մարիամ Սարգսի Տաշյանի** թեկնածությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնի երաշխավորությունը՝ հաստատել **Սերվիսի ամբիոնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Մարիամ Սարգսի Տաշյանի** թեկնածությունը, որպես **պրոֆեսոր Ա.Ռ.Ավագյանի** օգնական:

**3.5 ԼՍԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի վարիչ Մ.Ս.Սկրտչյանի հաղորդումը** պրոֆեսորին օժանդակելու կամ առանձին դասընթացները վարելու շրջանակներում ուսումնական պրոցեսում կազմակերպչական, տեխնիկական հարցերը կազմակերպելու նպատակով պրոֆեսորի օգնական ներգրավելու հարցի վերաբերյալ: Մ.Ս.Սկրտչյանը

ներկայացրեց ամբիոնի երաշխավորությունը ստացած Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի **հայցորդ Շուշանիկ Միսակի Տիգրանյանի** թեկնածությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի երաշխավորությունը՝ հաստատել **Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի հայցորդ Շուշանիկ Միսակի Տիգրանյանի** թեկնածությունը, որպես **պրոֆեսոր Ս.Հ.Հայրոյանի** օգնական

**4. ԼՄԵՑԻՆ.** Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոցենտ **Ա.Թ.Գրիգորյանի** հաշվետվությունն ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ (հաշվետվությունը կցվում է):

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան **Ս.Ս.Քելյանը** նշեց, որ ամբիոնը մեծ դեր ունի աշխարհագետ մասնագետներ պատրաստելու գործում: Մասնագիտության զարգացումը խթանելու նպատակով ամբիոնի ջանքերով կազմակերպվում են մասնագիտական հանդիպումներ՝ հանրապետության լավագույն մասնագետների հետ համատեղ ծրագրեր իրականացնելու և համագործակցելու հեռանկարով: Դեկան **Ս.Ս.Քելյանն** առաջարկեց ամբիոնի վարիչ դոց. **Ա.Թ.Գրիգորյանի** ներկայացրած հաշվետվությունը գնահատել բավարար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոցենտ **Ա.Թ.Գրիգորյանի** ներկայացված հաշվետվությունը և ամբիոնում կատարված աշխատանքը **գնահատել «բավարար»:**

## 5. Ընթացիկ հարցեր

**ԼՄԵՑԻՆ.** Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ **դոց. Վ.Վ.Գրիգորյանի,** Երկրաֆիզիկայի, ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ **դոց. Մ.Ս.Մկրտչյանի,** Սերվիսի ամբիոնի վարիչ **դոց. Ս.Ռ.Սուվարյանի,** Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Ս.Փիլոյանի,** Ռեգիոնալ երկրաբանության և

օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Վ.Մ.Մանուկյանի** և Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ **դոց.Ա.Թ.Գրիգորյանի** հաղորդումը ֆակուլտետում **մասնագիտական պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ**: Հաղորդումների ընթացքում ներկայացվեցին տարեվերջին ավարտված մագիստրատուրայի պրակտիկայի արդյունքները: Ամբիոնի վարիչները շեշտեցին ներդրված համակարգի դրական կողմերը ինչպես նաև մասնագիտական պրակտիկաներին ուսանողների և ղեկավարների առավելագույնս ներգրավվածությունը: Կարևորվեց ուսանող-ղեկավար կապը e-learning հարթակում և աշխատանքի ամենշաբաթյա առցանց ներկայացումը, թիրախավորվեց պրակտիկայի ղեկավարի գործառույթը: **Ա.Ս.Փիլոյանը** նշեց, որ վերանայվել են պրակտիկաների անցկացման կազմակերպությունները և ընդգրկվել նոր հաստատություններ և հետազոտական կենտրոններ, մասնավորապես՝ ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնը: Նշվեց նաև այն, որ իրենց աշխատավայրում պրակտիկա անցնող ուսանողներ ևս կան: Հաղորդման ընթացքում **դոց.Ս.Ռ.Սուվարյանը** ներկայացրեց պրակտիկայի կազմակերպման և հաշվետվությունների ձևավորման նպատակով նախապես կազմված նմուշ-պլանը, որտեղ հստակ նշված է ուսանողի գործառույթը պրակտիկայի վայրում: Նա խոսեց նաև վերջին տարիներին պրակտիկաների որակի նկատելի փոփոխության, բարցրացման մասին և հույս հայտնեց ավելիի մասին:

**ԵԼՈւՅԹ ՈւՆԵՑԱՎ.** Ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-տեղակալ **Գ.Փ.Ալեքսանյանը** մանրամասն ներկայացրեց մասնագիտական պրակտիկաների ընթացակարգը և ժամանակացույցը: Նշեց, որ կազմվել է գրության նմուշ, որն անհրաժեշտության դեպքում, կտրամադրվի պրակտիկա անցնող ուսանողին՝ ընդունող կազմակերպություններ ներկայացնելու նպատակով: Կոչ արեց ամբիոնի վարիչներին կոորդինացնել մասնագիտական պրակտիկայի գործընթացը, ամենշաբաթյա առցանց ստուգման ընթացքը, ինչպես նաև հետևողական լինել registrar և elearning համակարգերի ժամանակացույցային լրացմանը: Ելույթի

ընթացքում Գ.Ալեքսանյանն առաջարկեց նախքան պրակտիկայի մեկնարկը ուսանողների հետ կազմակերպել հանդիպում և ներկայացնել թե՛ պրակտիկայի ընթացակարգը և թե՛ էլեկտրոնային e-learning համակարգում լրացման ձևաչափը: **Ղեկան Ս.Ս.Քելյանը** դրական գնահատեց մասնագիտական պրակտիկաների նման գործադրումը, որը կամա, թե ակամա ստիպեց ուսանողներին առավելագույնս ներգրավվել ուսումնական գործընթացին: Խոսքի ավարտին ղեկան Ս.Քելյանը կոչ արեց համակարգային մոտեցում ցուցաբերել պրակտիկաների կազմակերպման հարցում:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն:

**5.2 ԼՄԵՑԻՆ.** *Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի* Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի հայցորդ Ալեքսանդր Խաչատրյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.** *Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի* Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի հայցորդ Ալեքսանդր Խաչատրյանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել «Անկայուն, թույլ գրունտների բացահայտումը երկրաֆիզիկական համալիր ուսումնասիրություններով (ՀՀ և Էկվադորի Հանրապետության օրինակով)» («Ընդհանուր երկրաբանություն» (դասիչ՝ ԻԴ.01.01), իսկ գիտական ղեկավար նշանակել Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի պրոֆեսոր, երկրաբ. գիտ. դոկտոր Սարգիս Հրաչիկի Հայրոյանին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 28 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0 *Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի* Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի հայցորդ Ալեքսանդր Խաչատրյանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել «Անկայուն, թույլ գրունտների բացահայտումը երկրաֆիզիկական համալիր ուսումնասիրություններով (ՀՀ և Էկվադորի Հանրապետության օրինակով)»,



(«Ընդհանուր երկրաբանություն» (դասիչ՝ ԻԴ.01.01), իսկ գիտական ղեկավար նշանակել Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի պրոֆեսոր, երկրաբ. գիտ. դոկտոր Սարգիս Հրաչիկի Հայրոյանին:

**5.3 ԼՍԵՑԻՆ.** *Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի* Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ **դոց.Վ.Վ.Գրիգորյանի** հաղորդումը Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասիստենտ, ա.գ.թ. Գոհար Ղամբարյանի դոկտորական թեմայի հաստատման հարցը:

**ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.** Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասիստենտ, ա.գ.թ. Գոհար Ղամբարյանի դոկտորական թեման հաստատել **«ՀՀ տարածքային անհամաչափ զարգացման համահարթման տեսամեթոդական հիմնահարցերը և տարածաշրջանային քաղաքականությունը»** վերնագրով (դասիչ՝ ԻԴ.03.01, «Աշխարհագրություն»):

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Բաց քվեարկության արդյունքներով **ԿՈՂՄ՝ 28 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0**, Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասիստենտ, ա.գ.թ. Գոհար Ղամբարյանի դոկտորական թեման հաստատել **«ՀՀ տարածքային անհամաչափ զարգացման համահարթման տեսամեթոդական հիմնահարցերը և տարածաշրջանային քաղաքականությունը»** վերնագրով (դասիչ՝ ԻԴ.03.01, «Աշխարհագրություն»):

**5.4 ԼՍԵՑԻՆ.** *Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի* Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ **դոց.Վ.Վ.Գրիգորյանի** հաղորդումը Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի 1-ին տարվա հայցորդ **Հեղինե Ավետիսյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ բաց քվեարկության արդյունքներով **ԿՈՂՄ՝ 28 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0**, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սոցիալ-

տնտեսական աշխարհագրության ամբիոնի 1-ին տարվա հայցորդ **Հեղինե Ավետիսյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

**5.5 ԼՍԵՑԻՆ.** *Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի* Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի վարիչ **դոց.Ս.Մկրտչյանի** հաղորդումը Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի 2-րդ տարվա հայցորդ **Շուշանիկ Տիգրանյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ բաց քվեարկության արդյունքներով **ԿՈՂՄ՝ 26 ԴԵՄ՝ 2, ՁԵՈՆՊԱՀ՝ 0**, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի 2-րդ տարվա հայցորդ **Շուշանիկ Տիգրանյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

**5.6 ԼՍԵՑԻՆ.** *Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի* Սերվիսի ամբիոնի վարիչ **դոց.Ս.Սուվարյանի** հաղորդումը Սերվիսի ամբիոնի հայցորդ **Օֆելյա Առաքելյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված և կատարած աշխատանքները՝ բաց քվեարկության արդյունքներով **ԿՈՂՄ՝ 27 ԴԵՄ՝ 1, ՁԵՈՆՊԱՀ՝ 0**, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնի հայցորդ **Օֆելյա Առաքելյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

*Գիտական խորհրդի նախագահ՝*

*Ս.Ս.Քելյան*

*Գիտական խորհրդի քարտուղար՝*

*Ե.Ս.Մանուկյան*